կարևոր կենտրոններից մեկը։ Տ. Ի. Դոլուրկի-նայի հաղորդումը վերաբերում էր Աղվանքում անտիկ շրջանի դամբարաններից հայտնաբերված նյութերին, որոնք թույլ են տալիս հետևելու անտիկ ավանդույթների ներթափանցմանը տեղի բնակիչների կյանքի բոլոր բնագավառներում։ Գ. Ա. Տիրացյանի զեկուցումը նվիրված էր Արմավիր քաղաքին և նրա մշակույթին։ Պեղումներից հայտնաբերված նյութերի հիման վրա նա ցույց տվեց, որ Արմավիրը եղել է տեղական մշակութային կարևորագույն օջախներից մեկը և միաժամանակ սերտ առնչություններ է ունեցել հելլենիստական աշխարհի հետ։

Գիտաժողովի եզրափակիչ պլենար նիստում լսվեցին՝ ակադ. Վ. Գեորգիևի (Բուլգարիա), Մ. Դ. Պետրուշևսկու (Հարավսլավիա), Ի. Տ. Կրուգլիկովայի և Դ. Բ. Շելովի զեկուցումները։

Գիտաժողովի մասնակիցները այցելեցին Հայաստանի մի շարք հնավայրերը (Գառնի, Գեղարդ, Էրեբունի, Զվարթնոց, Էջմիածին) և ծանոթացան կատարված պեղումների արդյունքներին։

Կարդացված բոլոր զեկուցումների հիմնական դրույթները առանձին հատորով հրատարակվեցին գիտաժողովի նախօրյակին։

Սոցիալիստական երկրների անտիկ շրջանի մասնագետների «էյրենն» կազմակերպության XIV գիտաժողովն, անկասկած, նոր խթան կհանդիսանա անտիկ հասարակության պատմությունն ուսումնասիրելու գործում։

Ս. ԿՐԿՅԱՇԱՐՅԱՆ

ՄԻՋԻՆ ԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՆՈՐ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Ախուրյանի շրջանի Քեթի գյուղի շրջակայքում 1969—1975 թթ. ծավալված հնագիտական հետախուզական աշխատանքների շնորհիվ հայտնաբերվել են Հայաստանի նախնադարյան մշակույթի տարբեր փուլերին պատկանող հուշարձաններ, որոնք թվագրվում են մ. թ. ա. III—I հազարամյակներով։

Ստորև ներկայացնում ենք Քեթի գյուղից մոտ երկու կիլոմետր հյուսիս-արևմուտք, «քարոտ հողեր» հանդամասում 1973—1974 թթ. պեղված միջին բրոնզեդարյան դամբարանները, որոնք մեծ հետաքրքրություն են ներկայացնում հիշյալ մշակույթի հուշարձանների սակավաթվության պատճառով, մանավանդ Շիրակի դաշտավայրում։

Դամբարան № 1. — Գտնվում էր մշակված հողատարածության մեջ։ Հայտնաբերման ժամանակ իրենից ներկայացնում էր եզրերը բնական որձաքարերով շարված, անկանոն շրջանաձև հատակագծով, մոտավորապես 7 մ տրամագծով ոչ բարձր դամբարանթումբ, որի արևմտյան և արևելյան հատվածները հողային աշխատանքների ժամանակ ավերվել էին։ Դամբարանափոսը ծածկող խոշոր սալաքարերը և հողի լիցքը հեռացնելուց հետո բացվեց 4 մ երկարությամբ, 2 մ լայնությամբ և 2,5 մ խորությամբ հսկայածավալ, քառանկյունի մի տարածություն, որն իր առանցքով ունի արևելք-արևմուտք դիրքորոշում։ Դամբարանի հատակին բացվեցին մարդու և կենդանու շատ վատ պահպանված կմախքների մնացորդներ։ Ննջեցյալը թաղված էր աջ կողքի վրա, ոտքերը և ձեռքերը կծկված, գլխով հարավ, դեմքով դեպի հյուսիս։ Նրա կողքին և ոտքերի մոտ հայտնաբերվեցին մանր եղջերավոր կենդանու շատ վատ պահպանված ոսկորներ։ Կմախքի ոսկորների և կենդանու գլխի վրա հայտնաբերվեցին քարից, բրոնզից և սպիտակ շաղախից պատրաստված տարատեսակ զարդարանքի առարկաներ՝ տափօղեր, ուլունքներ, շքասեղներ և այլն։ Վերոհիշյալներից բացի դամբարանի հյուսիսային պատի մոտ հայտնաբերվեցին տարբեր ձևի՝ գունազարդ, կետազարդ և փայլեցման եղանակով զարդարված, բաց վարդագույն և սև 17 կավամաններ։

Դամբարան № 2. — Գտնվում էր առաջինից 200 մ հարավ։ Նրա հայտնաբերման ժամանակ գետնի մակերեսին երևում էին ծածկի երկու սալաքարերը։ Հիմնահողային այս դամբարանը ուներ 1,8 մ երկարություն, 0,7 մ լայնություն և 0,7 մ խորություն։ Հյուսիս-արևմուտք, հարավ-արևելք դիրքորոշում ունեցող դամբարանափոսում դիակի մնացորդներ չհայտնաբերվեցին։ Հյուսիսային պատի մոտ դրված էր ձեռքով պատրաստված, անհարթ մակերեսով, դեպի շուրթը լայնացող կողերով, հարթ հատակով մի կավանոթ։

Դամբարան № 3. — Տեղադրված էր № 2-ից 7 մ հարավ։ Սա ծածկված էր երեք սալաքարերով, որոնց հեռացնելուց և դամբարանափոսը մաքրելուց հետո բացվեց 2 մ երկարությամբ, 1,4 մ լայնությամբ և 0,8 մ խորությամբ, մայր հողի մեջ փորված, քառանկյունաձև դամբարանափոս, որն ուներ արևելք-

արևմուտք կողմնորոշում։ Ննջեցյալը թաղված էր ձախ կողքի վրա, վերջավորությունները կծկված, գլուխը դեպի արևմուտք։ Նրա դանգի շրջակայքում դրված էին երկու թասեր և միականթ, երկթեք իրանով գավաթ։

Դամբարան № 4. — Հայտնաբերման ժամանակ կիսավեր էր։ Այն տեղադրված էր առաջինից 50 մ հարավ-արևելք։ Պահպանված հատվածի ուսումնասիրությունից պարզվեց, որ սա ևս ծածկված է եղել սալաքարերով, ունեցել է 1,4 մ երկարություն, 0,6 մ խորություն, հյուսիս-հարավ դիրքորոշում։ Ի տարբերություն մնացածների, դամբարանը քարարկղային էր։

Հանգուցյալը թաղված էր ձախ կողքի վրա, ձեռքերը և ոտքերը կծկված, գլուխը դեպի հյուսիս։ Դամբարանափոսի հյուսիսային մասում դրված էին երկու կավամաններ, իսկ ողնաշարի մոտ՝ հրաբխային խարամից պատրաստված սկավառակաձև իր։

Դամբարան № 5. — Ի տարբերություն նախորդների այս դամբարանը գետնի մակերեսին չուներ ոչ մի արտաքին նշան։ Այն հայտնաբերվեց վարելու ժամանակ, ծածկված էր խոշոր սալաքարով, որի կողքերին դրված էին ավելի մանրերը։ Դամբարանափոսն ուներ շրջանաձև հատակագիծ՝ տրամագիծը՝ 1,8 մ, խորությունը՝ 1,4 մ։ Այստեղ դիակի մնացորդներ չկային։ Դամբարանում գտնվեց 12 կավաման, որոնցից վեցը հասարակ, բաց վարդագույն, միաչափ կնճռներ էին, իսկ մյուս վեցը՝ միանման թասեր։ Ամենայն հավանականությամբ, այստեղ մենք գործ ունենք դիակիզման սովորույթի հետ։

Դամբարան № 6. — Տեղադրված էր առաջինից 300 մ հարավ-արևելք։ Հետաքրքիր է նկատել, որ այս դամբարանը ծածկող երեք սալաքարերի արանքները խցանված էին ավելի մանր քարաբեկորներով, որոնց նպատակը դամբարանի ներսը մաքուր պահելն էր։

Առավել հետաքրքիր է այն հանգամանքը, որ ձվածիր հատակագծով, 1,5 մ երկարությամբ, 0,9 մ լայնությամբ, 1,7 մ խորությամբ այս դամբարանի հատակի մակարդակին, երեք պատերի մեջ (հյուսիսային, արևելյան և արևմտյան) փորված էր 1,3 մ խորությամբ, հատակից սկսած 0,6—0,7 մ բարձրությամբ մի խոռոչ, որի մեջ դրված էին բազմաթիվ կավանոթներ։ Դամբարանի հատակին, որտեղ բացակայում էին ննջեցյալի մնացորդները, հայտնաբերվեցին տարբեր մևերի կավանոթներ, որոնց մեջ և շրջակայքում գտնվեցին բրոնզե շքասեղներ, ականջող, վանակատի ցլուխ և բազմաթիվ ուլունքներ։ Դամբարանի արևմտյան պատի մոտ տեղադրված էին խոշոր և մանր եղջերավոր կենդանիների կմախքի մասեր։

Պակաս կարևոր հետաքրքրություն չի ներկայացնում նաև հատակին դրված կավամանների մեջ և նրանց շրջակայքում գտնված փայտածխի և մոխրի առկայությունը, որը ակնառու կերպով ցույց է տալիս դիակիզման փաստը։

Դամբարան № 7. — Գտնվում էր նախորդից հինգ մետր հարավ, վրայի սալաքարերը հեռացնելուց հետո բացվեց հատակի մասում լայնացող, ձվածիր հատակագծով դամբարանափոսը (խորությունը՝ 1.6 մ, տրամագիծը գետնի մակերեսի վրա՝ 1.3 մ, հատակին՝ 1,9 մ)։

Այստեղ էլ նախորդի նման չհայտնաբերվեցին մարդկային կմախքի մնացորդները, բայց առկա էին մոխրի և փայտածխի հետքեր։ Դամբարանի կենտրոնում գտնվեց մանր եղջերավոր անասունի ամբողջական կմախք, որի վրա դրված էին վանակատե երեք խոշոր տձև ցլեփներ, իսկ կողքին՝ հրաբխային խարամից պատրաստված սկավառակաձև իր։ Այստեղ հայտնաբերված նյութական մշակույթի կոմպլեքսը համալրվում է հատակի խորշում դրված կճուճներով, թասերով, գավաթներով, աղամաններով, հրաբխային խարամից պատրաստված սկավառակաձև իրերով, վանակատե գեղեցիկ հարդարված նետասլաքներով և բրոնզե փոքրիկ ուլունքով։ Ինչպես տեսնում ենք, վերը ներկայացված, Քեթիի շրջակայքում պեղված միջին բրոնզեդարյան դամբարանները պատկանում են կառուցվածքային երեք տիպերի՝

ա) Քարարկղային,

բ) Հիմնահողային, բառանկյունաձև հատակագծով,

գ) Հիմնահողային, շրջանաձև կամ ձվածիր հատակագծով և ներքին խոռոչով (աղ. 1)։

Եթե առաջին երկուսը (հատկապես քարարկղայիններ) խիստ բնորոշ են մ. թ. ա. III հազարամյակին, ապա ձվածիր և շրջանաձև հատակագծով դամբարաններ հազվադեպ են հանդիպում։ Դրանց հիմնահողային տեսակները հայտնի են Էլարից և Սևանից[1], իսկ քարաշենը՝ Էջմիածնի շրջանի Այգեշատ գյուղի դամբարանադաշտից։ Այգեշատի հիշյալ հուշարձանները թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսով և պատկանում են նույն հազարամյակի վաղ փուլին պատկանող գունազարդ, կե-

---

1 Պեղումները՝ Է. Վ. Խանզադյանի, նյութերը հրատարակված չեն։ Հ. Հ. Մնացականյան, Լճաշենի նյութական մշակույթի զարգացման հիմնական էտապները, «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 2, էջ 99։

տաղարդ և գծաղարդ խեցանոթներին[2]։ Չնայած մուտքերի որոշակի տարբերություններին, վերը նշված դամբարանները իրենց ներքին հորինվածքով բավական նման են Արթիկի[3] և Ոսկեհասքի[4] տուֆի մեջ փորված (կատակոմբատիպի) դամբարաններին։

Ուշագրավ է նաև այն, որ Քեթիում պեղված դամբարանները հատակի մասում ունեն խորշեր, որոնք կոչված են եղել խեցեղենի տեղադրման համար։ Նման երևույթը առկա է նաև Այգեշատի № 3 քարաշեն դամբարանում, որի հյուսիս-արևելյան պատի տակ փորված է ոչ շատ բարձր խորշ։ Նրա մեջ հայտնաբերվել են երկու խեցանոթ։

Ինչպես տեսնում ենք, Քեթիի հիմնահողային ձվածիր և շրջանաձև հատակագծով դամբարանների հորինվածքային առանձնահատկությունները կրկնվում են նշված դարաշրջանով թվագրվող այլ վայրերի նյութի մեջ, սա ցույց է տալիս թաղման կամերայի պատրաստման մտահղացման ընդհանրությունը Հայաստանում։

Այսպիսով, Քեթիի միջին բրոնզեդարյան դամբարանները, որոնք առայժմ սակավաթիվ են, այնուամենայնիվ դրսևորում են Շիրակի դաշտում մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսին գոյություն ունեցող թաղման ձևերի ու դամբարանների հորինվածքների որոշակի տարբերություններ, որոնք արտահայտվում են դիաթաղման և դիակիզման սովորույթների առկայությամբ։

Վերը նշված դամբարաններից հայտնաբերված հարուստ և արժեքավոր նյութերը խմբավորվում են հետևյալ տեսակների մեջ՝ վանակատի ցլեփներ, նետասլաք, հրաբխային խարամից պատրաստված սկավառակաձև իրեր, զարդարանքի առարկաներ և կավանոթներ։ Վանակատե տձև ցլեփները միջուկից պոկելուց հետո լրացուցիչ հարդարման չեն ենթարկվել։ Սրանք հիմնականում հայտնաբերվել են դամբարանում հանդուցյալի հետ թաղված կենդանիների ոսկորների վրայից, որոնց ծիսական, սիմվոլիկ իմաստը կասկած չի հարուցում։ Այս երևույթը բնորոշ է Հայաստանի և Անդրկովկասի համաժամանակյա մի շարք հուշարձաններին։

Նետասլաքը պատրաստված է վանակատի շեղրի երկկողմանի, հարթ ռետուշման եղանակով, որը հիմքում ունի հանվածք՝ փայտին ամրացնելու համար (աղ. II, նկ. 15)։ Փոքրիկ չափերի, գեղեցիկ հարդարված նետասլաքների այս տիպը լայն տարածում ունի Հայաստանի և Անդրկովկասի միջին բրոնզեդարյան հուշարձաններում (Հառիճ, էջմիածին, Լճաշեն, Կարմիր վանք, Թրիալեթի)[5]։



Աղ. I

---

2 Պեղումները՝ Ռ. Մ. Թորոսյանի, նյութերը հրատարակված չեն։

3 Т. С. Хачатрян, Материальная культура древнего Артика, Ереван, 1963, էջ 22։

4 Պեղումները՝ Ս. Հարությունյանի, Լ. Պետրոսյանի, Լ. Ենգոյանի, նյութերը հրատարակված չեն։

5 Т. С. Хачатрян, Древняя культура Ширака, Ереван, 1975, նկ. 69—70; А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, նկ. 20а, 5—7, 33—34: Հ. Հ. Մնացա-

Նետասլաքների այս տիպը շատ չնչին փոփոխություններով հարատևում է մինչև մ. թ. ա. I հազարամյակի կեսերը։

Հիշատակության արժանի են նաև հրաբխային խարամից պատրաստված, սկավառակաձև, վերևի մասում թեթևակի գոգավորություն ունեցող իրերը (աղ. III, նկ. 15), որոնք հայտնի են նաև էջմիածնի, էլարի, Կիրովականի, Թռիալեթի[5] և այլ դամբարաններից։



Աղ. II

Վերը նշված առաջին երեք հնավայրերից հայտնաբերվածները հիմնականում դրված են եղել ամանների բերաններին և հեղինակների կարծիքով կատարել են կափարիչի դեր։ Քեթիի օրինակները դրված էին առանձին. նրանցից մեկի վրա կային երկու փոքրիկ աղաման։ Բացի այդ, վերին կողմում արված փոսիկը հիմք է տալիս ենթադրելու, որ բացի կափարիչի դեր կատարելուց նրանք ծառայել են նաև այլ նպատակների։

կ ա ն յ ա ն, նշվ. աշխ., էջ 103; Б. А. Куфтин, Археологические раскопки в Триалети, I. Тбилиси, 1941, *էջ 449, աղ.* C VI.

6 *Պեղումները՝ Ռ. Մ. Թորոսյանի, նյութերը հրատարակված չեն։ Պեղումները՝ Է. Վ. Խանզադյանի, նյութերը հրատարակված չեն։* Э. М. Гогадзе, Периодизация и генезис курганной культуры Триалети. Тбилиси, 1972, *աղ. 15, նկ. 24, աղ. 19, նկ. 10, 26։*

Զարդարանքի առարկաներ. — *Դրանք բրոնզից պատրաստված ձևավոր, սնկաձև գլխիկով, միջանցիկ անցքով, կլոր իրանով շքասեղներ են, փոքրիկ տափօղեր, ականջօղեր, շաղախից ու սարդիոնից պատրաստված տարբեր տեսակի ուլունքներ (աղ. II, նկ. 13—14, աղ. III, նկ. 16—17)։ Սրանց համեմատական ուսումնասիրությունը մեզ տանում է հուշարձանների այն տարածքը, որը նշվեց վերևում։*



Աղ. III

Ուսումնասիրվող դամբարաններում ձեռք բերված նյութական մշակույթի նմուշների մեջ առավել բազմաքանակ են խեցեղեն առարկաները, որոնք խմբավորվում են հետևյալ տիպերի մեջ՝ կճուճներ, քրեղաններ, թասեր և գավաթներ։

Կճուճները հիմնականում ներկայանում են չորս տեսակներով՝ գունազարդ, կնտազարդ, փայլեցման եղանակով զարդարված և հասարակ։ Գունազարդ կճուճներն ունեն գնդաձև և փքուն իրաններ, ցածր վիզ ու թեթևակի դուրս ճկված շուրթեր։ Կարմիր հիմնագույնի վրա, սև ներկով նրանց ուսերին արված են եռանկյունաձև, քառանկյունաձև, ցանցաձև լցված պատկերներ և կից եռանկյունիներ (աղ. II, նկ. 1—3)։ Նման խեցանոթներ հայտնաբերվել են Թազաքենդի, Հառիճի, Արթիկ...[7] ու այլ վայրերի

---

7 А. А. Мартиросян, *նշվ. աշխ., նկ. 15—17, 19։* Т. С. Хачатрян, *նշվ. աշխ., նկ. 52, 60—61։ Է. Վ. Խանզադ-*

հուշարձաններից և թվագրվում են II հազ. առաջին քառորդով։

Առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում խամրած սև փայլով, ցածր վզով, դուրս ճկված շուրթով, սանրատամ, կետազարդ և փայլեցման եղանակով զարդարված կճուճները (աղ. II, նկ. 4—11), որոնք իրենց զուգահեռներն ունեն Հառիճում, Ծիծեռնակաբերդում, Երևանի Ս. Մ. Կիրովի անվան քիմկոմբինատի տերիտորիայում բացված դամբարանում, Ուզերլիկ-Թեփեում[8] և թվագրվում են վերը նշված ժամանակաշրջանով։

Այս կոմպլեքսում կա նաև ձեռքով պատրաստված, բաց դարշնագույն, տափակ նստուկով, լայն բերանով, թեթևակի դուրս ճկված շուրթով մեկ կճուճ։ Նրա հատակի եզրերը և շուրթը զարդարված են խազման եղանակով արված հորիզոնական նախշերով (աղ. II, նկ. 9)։ Նման կճուճներ հայտնի են Ուզերլիկ-Թեփեի առաջին շերտից[9] և թվագրվում են մ. թ. ա. II հազարամյակի սկզբով։

Առավել հետաքրքիր է կավանոթների զարդարումը կետերի և փայլեցման հնարքներով։ Եթե վերը նշված երկու տեսակները շատ ընդհանուր են միջին բրոնզեդարյան մշակույթին, այլա կետազարդման և փայլեցման եղանակներով զարդարված ամանները առանձնանում են մինչև այժմ հայտնիներից։ Սրանք կարծես ցուցադրում են միջին և ուշ բրոնզեդարյան խեցանոթների զարդանախշման հնարքների զարգացման եզրակացումը։

Խեցանոթների մի առանձին խումբ են կազմում բաց վարդագույն և դարշնագույն, ձգված իրանով սափորները, որոնք ունեն լավ մշակված և երբեմն էլ անհարթ մակերես (աղ. III, նկ. 1—4)։

Կավանոթների այս խմբում կան խորանիստ եռանկյունաձև զարդանախշեր ունեցող նմուշներ (աղ. III, նկ. 2)։

Վերը հիշատակված կավանոթները իրենց ձևերով և զարդարման մոտիվներով տիպական են Հայաստանի և Անդրկովկասի մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսով թվագրվող մշակույթին, որը ներկայացվում է Շիրակի, Արարատյան դաշտի, Էլարի, Թրիալեթիի և Ուզերլիկ-Թեփեի հուշարձաններում[10]։

Խեցանոթների մեկ այլ խումբ են կազմում բաց վարդագույն և դարշնագույն թասերը, որոնք ունեն կորնթարդ և ուղիղ կողեր (աղ. III, նկ. 6—9)։ Ուղիղ կողերով, հարթ հատակով, լայնացող բերանով թասերը հանդես են գալիս դեռևս մ. թ. ա. III հազարամյակի երկրորդ կեսում և, ինչպես ցույց են տալիս մեր նյութերը, հարատևում են մինչև մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսը, մինչդեռ կորընթարդ կողերով թասերը հանդես են գալիս մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսում։ Այս թասերի տարածման շրջանակներն էլ նույնն են, ինչ վերը նշված սափորներինը։

Խեցանոթների մյուս խումբը բաղկացած է գնդաձև իրանով, թեթևակի դուրս ճկված շուրթով թաս-քրեղաններից (աղ. II, նկ. 12)։ Սրանց ուսերի վրա փայլեցման եղանակով արված են ալիքաձև և հորիզոնական նախշեր։ Այս տիպի կավանոթները ավելի լավ են ցուցադրում միջին և ուշ բրոնզեդարյան խեցեղենի կապը։ Հետաքրքիր է նկատել, որ Թազաքենդից, Հառիճից, Էլարից, Գառնիից[11] հայտնաբերված նույնատիպ կավամանների վրա փայլեցման եղանակով արված զարդերը բացակայում են՝ կամ գունազարդ են կամ սև։

Վերը նշված թասերից բացի առավել ուշ ժամանակաշրջանով են թվագրվում սև կամ բաց դարշնագույն փայլուն մակերեսով, փքուն իրանով, հարթ կամ փոքրիկ պատվանդանաձև նստուկով թասերը, որոնք իրենց հորինվածքային ձևերով ավելի մոտենում են ուշ բրոնզեդարյան խեցեղենին (աղ. II, նկ. 10—11)։ Այդպիսիք հայտնի են Կիրովականից, Լճաշե-

---

յան, Կ. Ն. Մկրտչյան, Է. Ս. Պարսամյան. Մեծամոր, Երևան, 1973, նկ. 22։

8 Т. С. Хачатрян, նշվ. աշխ., նկ. 48—50, 54, 60—61 և հտ.։ Ս. Ա. Եսայան, Երևանի պատմության թանգարանի հնագիտական իրերի կատալոգ 3-րդ, Երևան, 1972, աղ. I, նկ. 3—7։ К. Х. Кушнарева, Новые данные о поселении Узерлик-Тепе около Агдама, Труды МИА, вып. 125, М.—Л., 1965, նկ. 21—24, 29։

9 К. Х. Кушнарева, նշվ. աշխ., նկ. 12, 5—7։

10 Т. С. Хачатрян, նշվ. աշխ., նկ. 72, Ս. Ա. Եսայան, Գ. Հ. Միքայելյան, Բրոնզեդարյան գունազարդ խեցեղենի նորահայտ նմուշներ, «Պատմա-բանասիրական հանդես», 1971, № 2, էջ 278։ Է. Վ. Խանզադյան, Գառնի 4-րդ, Երևան, 1969, նկ. 94—95։ Э. М. Гогадзе, նշվ. աշխ., աղ. 15, նկ. 24, աղ. 19, նկ. 10, 26։ К. Х. Кушнарева, նշվ. աշխ., նկ. 31։

11 А. А. Мартиросян, նշվ. աշխ., նկ. 15—17։ Т. С. Хачатрян, նշվ. աշխ., նկ. 55, 62—63։ Է. Վ. Խանզադյան, նշվ. աշխ., տախտակ I։

նից, Թրիալեթիից, Ուզերլիկ-Թեփեից[12] և այլ հուշարձաններից, որոնք թվագրվում են միջին բրոնզի վերջին դարերով։

Հաջորդ խմբի կավանոթները սև կամ դարչնագույն մակերեսով, երկթեք իրանով, կլոր կամ երկարավուն կանթով գավաթներ են (աղ. III, նկ. 12—13)։ Այսպիսի գավաթներ հայտնաբերվել են Էլարից, Գառնիից[13] և այլ վայրերից։

Ելնելով վերը ներկայացված դամբարանների և նրանցից հայտնաբերված նյութերի համեմատական ուսումնասիրությունից, կարող ենք ասել, որ Շիրակի դաշտի և մասնավորապես Քեթիի միջին բրոնզեդարյան մշակույթը իր բնորոշ կողմերով սերտորեն կապվում է համահայաստանյան՝ մ. թ. ա. II հազարամյակի առաջին կեսով թվագրվող մշակույթի հետ և կազմում է նրա անբաժանելի մասը։

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԱՄԱՍՓԻՒՌ ԾԱՂԿԻՆ»

Մաշտոցի անվան Մատենադարանի ինը ձեռագրերում պահպանվել է մի գրույց համասփյուռ ծաղկի մասին, որ վերնագրված է՝ «Պատմութիւն համասփիւռ ծաղկին», կամ «Վասն ծաղկին»։ Այս գրույցում թվարկված են այդ ծաղկին վերագրված հրաշագործություններ։ Գրույցի մեջ ասված է. «Թէ ի ականջդ հասուցանես՝ զվերնական ձայն և զբարբառ լսես և հասկանաս զամենայն լեզուս մարդկան և իմանաս զձայն անասնոց և գազանաց և թռչնոց. ապա թէ ի աչքդ հասուցանես, զամենայն արարածք առաջի աչացդ տեսանես. իսկ թէ ի քիմքդ հասուցանես, զհոտ անուշ յերկնից առնուս, ապա թէ ի լեզուդ հասուցանես, զամենայն լեզու զըրուցես և բարբառիս, զիմաստութիւն իմաստնոց և զվարդապետութիւն պատմես, ապա թէ ի մատունդդ հասուցանես՝ զամենայն արհեստ (կամ արուեստ) առնես... Եւ բազում ինչ ասացին վասն ծաղկիս զօրաւոր հրաշս մեծամեծ»[1]։

Այս վերջին արտահայտությունը մեզ թելադրեց այլ աղբյուրներում էլ հիշատակություններ որոնել համասփյուռի հրաշագործությունների մասին։ Մյուս աղբյուրը Մխիթար Գոշի առակներն են։ 26-րդ առակում պատմվում է, թե ինչպես բույսերը թագավոր են ընտրում. «Եւ եղև ոչ սակաւ հակառակութիւն, զի ոմանք ասէին զշուշան լինել, և այլք զախրիզանն, և բազումք զհամասպրանն (նույնը՝ համասփյուռ— Ս. Ա.)[2] և ամենեցուն հաճոյ թուեցաւ լինել համասպրանն... զի ամենայն տիրիցէ աշխարհի. և մանաւանդ զի մեծամեծ ունելով զօրութիւն բժշկութեան՝ զհիւանդս բժշկիցէ և քաջատես առնիցէ, և ի վերայ ծովու գնալ տացէ, և իմաստութեամբ զտգէտս լցցէ»[3]։ Այստեղ չեն կրկնվում նախորդ գրույցում թվարկված հրաշագործությունները, այլ նորանոր հատկություններ են ավելացվում։

XVII դարի բանաստեղծ Դավիթ Սալաձորցին իր «Գովասանք ծաղկանց» տաղում պատմում է հետևյալ մի ավանդություն համասփյուռ ծաղկի մասին։

Արքայիկ օձն թագաւոր, ինքն սպիտակ
որպէս զձիւն,
Համասփիւռին կու հետեվի և զօրութիւն
կառնու հոտոյն[4]։

Արքայիկ օձը՝ օձերի թագավորը, իր զորությունը վերցնում է ծաղիկների թագավորից։ Իսկ արքայիկ օձի զորությունը նրա նայվածքի մեջ է, որն այրում, սպանում է։ Մի ավանդություն կա այն մասին, որ երբ Ալեքսանդր Մակեդոնացին պաշարել էր մի ասիական քաղաք, արքայիկ օձը պարսպի վրա գտնվող անցքից իր հայացքով 300 մարդ է սպանում Ալեքսանդրի զորքից[5]։ Արքայիկ օձի ծնունդը կապվում է թաչահավ կոչվող թռչունի հետ (թաչ, ոգի բառից, իբր հոմանիշ «արտավազդահավ» բառի, որ ծագում է Արտավազդի անունից, իբր

---

12 А. А. Мартиросян, նշվ. աշխ., նկ. 32։ Հ. Հ. Մնացականյան, նշվ. աշխ., աղ. III, նկ. 3—4, 6։ Э. М. Гогадзе, նշվ. աշխ., աղ. XIX, նկ. 2; նկ. 31, 2—3-րդ շերտերի 2-րդ խումբ։

13 Է. Վ. Խանզադյան, Գառնի IV, նկ. 80։

1 Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռ. №№ 6488, 5747, 5616, 7993, 7100, 549, 8737, 10020, 7085։ Տե՛ս նաև Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 300։

2 «Նոր բառգիրք հայկազեան լեզուի», Վենետիկ, 1837, հատ. 1, էջ 21։

3 Մխիթար Գոշ, Առակներ, Երևան, 1951, էջ 61։

4 Կ. Կոստանյան, Նոր ժողովածու, պրակ Բ, Թիֆլիս, 1892, էջ 75։

5 «Բազմավեպ», Վենետիկ, 1850, էջ 140։